ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻԹԼԻՍԻ ՆԱՀԱՆԳԻ ՍԱՍՈՒՆ ԳԱՎԱՌԻ ՇԵՆԻԿ ԳՅՈՒՂԻ 1915-1916ԹԹ. ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ՝ ԸՍՏ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՊՐԱԾ ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԻ*

էդիկ Մինասյան

Բանալի բառեր՝ Թուրքական կանոնավոր բանակ, քրդական աշիրապետեր, Սասուն, Մուշ, Անդոկ լեռ, Կուռտիկ (Սիմ) լեռ, Շենիկ գյուղ, Ահմադ, Բիթլիս, Սղերդ, հերոսական ինքնապաշտպանություն, ցեղասպանություն:

Սասնա սարեր բարձրիկ են,
Սասնա սարեր քաղցրիկ են,
Վըր սարերին սեր ու հավատ կշնգեր,
Մըջ ձորերուն Դավթի ջաղաց կգնգեր...

Երբ առաջին անգամ 2006 թվականին ինձ բախտ վիճակվեց ոտք դնել մեր նախնյաց հողի վրա՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանի նախաձեռնությամբ կազմակերպված ուխտագնացության շնորհիվ, ես չգիտեի, որ մեկընդմիշտ դառնալու եմ Արևմտյան Հայաստանի նվիրյալ ուխտավոր: Գրեթե ամեն տարի՝ սկսած 2009 թվականից, ԵՊՀ պատմության ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտներին տանում եմ Արևմտյան Հայաստան ու կազմակերպում նրանց դիպլոմների հանձնումն Անիում կամ Վանում (Ախթամար), Սիսում (Կիլիկիա) և այլուր: Գրեթե ամենամյա ուխտագնացությունն Արևմտյան Հայաստան անբացատրելի մի զգացողություն և լիցք է առաջացնում իմ մեջ: Հիշողություններն ու խորհրդածությունները մշտապես ուղեկցում են ինձ, առաջացնում են էրգրի ներաշխարհի մտամորմոք ցավը, զուգահեռներ անցկացնելով անցյալի ու ներկայի միջև, հանգեցնում մեր արմատներին վերադառնալու անհրաժեշտության գաղափարին: Ամեն անգամ երբ լինում եմ մեր հայրենիքի չքնաղ եզերքներում, տեսնում մշակութային մեծ արժեք ներկայացնող վանքերի, եկեղեցիների, բերդերի ու քաղաքների ավերակները, առանձին տեղերում դեռևս կանգուն մնացած ճարտարապետական գոհարները, ապրում եմ ոչ միայն հոգևոր վերածննդի և հայոց անցյալի պատմության հերոսական դրվագների վսեմ զգացմունքների պահեր, այլև ափսոսանքի ու կորստի անանց մեծ ցավ, քանզի լինելով մեծ եղեռնը վերապրածների միջավայրում (ՀՀ Թալինի շրջանի Ոսկեթաս գյուղում)՝ մշտապես ականատես եմ եղել նրանց կորստի մեծ ցավին, կարոտի ու հայրենի բնօրրան՝ էրգիր վերադառնալու երազանքին ու անվերջ սպասումին: 2010թ. օգոստոսի 1-ին, երբ մեծ եղեռնից մազապուրծ եղած հայրական պապիս՝ Պողոս Մինասյանի և տատիս՝ Զանե Մինասյանի՝ երկնային դրախտավայր Խնուսի Քաղքիկ գյուղն այցելելուց և նրանց դառը ճակատագիրն ու ապրումները վերհիշելուց հետո որոշեցի այցելել Սասունի Շենիկ գյուղը՝ մայրական պապիս՝ Սիմոն Հակոբյանի ծննդավայրը՝ զգալու նրա մտատանջության բուն էությունը: Կորուստն ավելի դաժան է, երբ հաղորդակցվում ես նրա հետ, երբ վերադարձի հարցը դեռ անորոշ է, անկերպարանք:

Օգոստոսի 2-ին, առավոտ ծեգին Մշո դաշտով մեր մեքենան սլանում էր դեպի Սասուն: Մեր ուղեկիցն էր Մուշի հայ բնակիչ Արմենը (արմատներով Սասունի Սեմալ

---

* Հոդվածն ընդունվել է 09.10.21:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, պ.գ.դ. Ա. Հայրունին:16.10.21:

գյուղից), որի հետ ծանոթացել էինք դեռևս 2006 թվականին: Մենք հիշում էինք տարբեր պատմություններ անծայրածիր Մշո դաշտի մասին և նրա գյուղերի մասին: Մի աղբյուրի մոտ մեքենան կանգ առավ: Խմում էինք սառնորակ ջուրն ու նայում անծայրածիր դաշտերին:

Սառնորակ և անուշիկ ջուրը խմելիս ես հիշեցի Մուշի Փեթարա, Գոմեր գյուղերից, Խութից, Սասունից ու Խնուսից բռնագաղթված այն տարեց մարդկանց, ովքեր ապրելով Թալինի շրջանի Ոսկեթաս գյուղում՝ աշխարհին հրաժեշտ տալիս, երազում էին Մուշի, Խնուսի ու Սասունի սառնորակ ջուրը:

Վաղնջական ժամանակներից Մշո դաշտը հանդիսացել է մեր պատմության հերոսական դրվագների ու մշակույթի կերտման օրրաններից մեկը: Այն ծածկված է փառահեղ պատմություն ունեցող հուշարձաններով, մեր մշակույթի լուսավոր դեմքերի ու ազատագրական պայքարի նվիրյալների անհայտ դարձած շիրիմներով: Հայոց պատմությունից հիշեցի 1915թ. գարնանը, տարոնահայության, Մուշի դաշտավայրի հայության կոտորածը թուրք և քուրդ ոճրագործների կողմից: Հունիսի 28-ին Մուշի հայությունը դիմում է ինքնապաշտպանության: Տեղի 12 հազար բնակչությունից բացի Մուշում ապաստան էր գտել շրջակա հայկական գյուղերի 10 հազար բնակիչ[1]: Հուլիսին ռուսական բանակի անակնկալ նահանջը հնարավորություն տվեց թուրքերին մեծ ուժեր կենտրոնացնելու և շարունակելու Տարոնի հայության կոտորածը: Հայ մարտիկները՝ Հակոբ Կոտոյանի գլխավորությամբ, արիաբար մարտնչեցին մինչև վերջին փամփուշտը: Դա հնարավորություն տվեց բնակչության մի մասին պատսպարվել Սասունում[2]:

Պատմությանը հայտնի է, որ 1915թ. մարտից սկսած՝ թուրքական կանոնավոր բանակի ստորաբաժանումները և քրդական ջոկատները հարավից շարժվեցին Սասուն, որտեղ կար մոտ 50 հազար հայ բնակչություն՝ ներառյալ այլ վայրերից ապաստանածները[3]: Սասունի ինքնապաշտպանությանը մասնակցում էր 600 մարտիկ: Մուշի և դաշտավայրի գյուղերի հետ հաշվեհարդար տեսնելուց հետո թուրքական հրամանատարությունն ազատված ուժերը տեղափոխեց Սասուն: Անդոկի և Ծովասարի լեռներում ինքնապաշտպանական հերոսամարտերը շարունակվեցին մինչև օգոստոսի սկիզբը[4]:

Մեքենան արդեն դժվարությամբ էր հաղթահարում Սասնա լեռների վերընթացը: Մեր առաջ բացվող տեսարանները, որոնց մասին պատկերացում ունեինք միայն երգերից ու գրքերից, կարծես մեր պապերի երբեմնի կենսաձևի մասին էին պատմում: Ահա և Սասնա աշխարհը, որի մասին Հայաստանի պատմական աշխարհագրությունից ստացած գիտելիքները Երևանի պետական համալսարանում հարստացրել էի նաև այլ սկզբնաղբյուրներից ու քարտեզներից քաղված նյութերով: Եվ ես փորձում էի դրանք ներկայացնել մեր խմբի անդամներին:

Սասունը պայմանական Հայաստանի Աղձնիք նահանգի (Ալզինի, Ալշինի) գավառի հյուսիս-արևմտյան մասն էր կազմում, որը «Աշխարհացույցում» հիշատակվում է որպես Աղձնիքի 10-րդ գավառ:

Թուրքիայի այժմյան Բիթլիս վիլայեթի արևմտյան, Մուշ-վիլայեթի հարավային և Սղերդ վիլայեթի հյուսիս արևմտյան մասերը կազմում են Սասուն գավառը, որը բաժանված է այդ վերոհիշյալ երեք վիլայեթների վրա: Սասունի (1914թ.) սահմանները հետևյալներն էին. արևելքից՝ Բիթլիսի վիլայեթը՝ Բիթլիս կենտրոնով, հյուսիսից՝ Մուշ վիլայեթը՝ Մուշ կենտրոնով, հարավից՝ Սղերդ վիլայեթը՝ Սղերդ կենտրոնով: Արևմուտքից՝ Գենջի և Լճային շրջանները: Սասունի մեծ մասն այժմ ընկնում է Սղերդի վիլայեթի մեջ[5]: Սասունը 18-րդ դարի սկզբից մինչև 20-րդ դարի սկիզբը հաջորդաբար եղել է նախ՝ Վանի, ապա՝ Դիարբեքիրի ու Բիթլիսի վիլայեթների մեջ, միայն 1915 թվականի կոտորածից հետո զրկվեց իր պատմական Սասուն անունից՝ որպես աշխարհագրական մի ամբողջություն, բաժանվեց Բիթլիս, Մուշ, Սղերդ վիլայեթների վրա[6]:

Սասունի բնական սահմաններն են՝ հյուսիսից՝ Տավրոս լեռների շղթան, որը բաժանում է Մշո դաշտը Սասունից, արևելքից արևմուտք է երկարում Մշո դաշտը, որը Սասունի համար հարավային հսկա մի պատվար է: Արևելքից արևմուտք ուղղության վրա կան Խութի Սև սարը, Քանա սարը, Ծիրնկատարը, Սիմը կամ Կորդուքը (Կուռտիկ) և Խոզմո սարը՝ ամենաարևմտյան գագաթը: Հարավից Սլիվանի դաշտն է, որի հյուսիսային մասում Մարաթուկի և Խարզանի լեռներն են[7]: Խութի լեռների արևելյան փեշերից է բխում և ուղիղ դեպի հարավ հոսում Թուխ կամ Բաղեշի գետը: Արևմուտքում՝ Խոզմո լեռան արևմտյան ստորոտներից է բխում և դեպի հարավ հոսում Խուլբի գետակը՝ մինչև Բաթմանի գետին խառնվելը: Հյուսիսից՝ Մշո դաշտի, հարավից՝ Սլիվանի դաշտի, արևելքից՝ Բաղեշ և արևմուտքից Խուլբ գետերի միջև պարփակված լեռնաշխարհը կոչվում է Սասուն: Այն ունի երկնասլաց լեռներ, անդնդախոր ձորեր, լեռնացած ժայռեր, ստորերկրյա բնական մեծ քարանձավներ, նեղ ու անառիկ կիրճեր, որոնց մեջ տեղ-տեղ փռվում են փոքրիկ հարթություններ և սարավանդներ, որոնք իրենց բարեբերությամբ և հարուստ բուսականությամբ գյուղատնտեսության և անասնապահության համար պիտանի են դառնում՝ շնորհիվ համառ և աշխատասեր լեռնականների աշխատանքի: Սասունի լեռների ամենաբարձր գագաթներն են Անդոկը, Ծովասարը, Կեփինը, Մարաթուկը, Սիմը (այժմ Կորդուքը, Կուռտըկ), Ծիրնկատարը, Սև սարը և Քանա սարը: Այդ լեռնագագաթներից Անդոկը, Ծովասարը, Կեփինն ու Մարաթուկը պաշտամունքի վայրեր են եղել վաղնջական ժամանակներից մինչև 1915 թ., նույնիսկ նախաքրիստոնեական շրջանում: Այդ լեռներից յուրաքանչյուրն ունի իր ավանդությունը[8]:

Սասունի նշանավոր և մեծ գյուղերն էին Գելիեգուզանը, Սեմալը և Շենիկը՝ գետեղված մի փոքր հարթավայրում: Դրանք մոտ էին Մուշ քաղաքին: Այստեղից էլ միշտ սկսվել է թուրքական բանակի հարձակումը Սասունի վրա: Պատահական չէ, որ թուրքերը Սեմալում և Գելիեգուզանում 1904թ թուրքական զորանոց կառուցեցին[9]: Գելիեգուզան գյուղը, որ գտնվում է Անդոկ լեռան արևելյան ստորոտում, ուներ 350 տուն՝ ցրված երեսուն չորս թաղերում, որոնք սկսվում են Անդոկի ստորոտից, փռվում Կանիա Բահջի գետի աջ և ձախ ափերի վրա և հասնում մինչև Սուսանա գետը՝ Ծովասարին մոտիկ: Սեմալն 80 տուն և երեք թաղ ուներ՝ վերին, միջին և ներքին: Դաշտոկի գետը Սեմալից անցնող Կուրտկի վրա գտնվող Կորեկնու աղբյուրից գալիս էր և ուղղվում դեպի Շենիկ, այստեղ Գելի էր կոչվում, հոսելով խառնվում էր Խուլբի գետին[10]:

Կանգնած ենք Անդոկ սարի դիմացի բարձունքին, որտեղից ամբողջությամբ երևում էր Շենիկ գյուղը: Հայկական կիսաքանդ տներ, կիսատ պռատ վերանորոգված տներում՝ քրդական բազմանդամ ընտանիքներ, առավոտյան՝ աքլորականչ, գոմերից դուրս եկած անասունների ներդաշնակ ձայներ, խոտի դեզեր: Մտնում ենք գյուղ:

Շենիկը Սասունի կարևորագույն գյուղերից մեկն է, որ Գելիեգուզանի և Սեմալ գյուղերի հետ կազմել է այն եռանկյան կենտրոնը, որ հանդիսացել է ազատագրական շարժումների թատերաբեմ: Շենիկ գյուղը գտնվում է Սասունի հյուսիսային կողմում, Սեմալ գյուղից 3-4 կմ արևմուտք և նրա հետ փոքրիկ սարադաշտի վրա, Գելիեգուզանի, Ալիանքի հյուսիսում, նույնպես 3-4 կմ հեռու, Կուրտըկ (Սիմ) լեռան հարավային ստորոտի հարթավայրում, Մուշից քսան կմ հեռու՝ Մուշից Սասուն մտնող ճամփի վրա և փակել է Սասունի ճանապարհը թուրք կառավարական զորքի հարձակումների ժամանակ: Փաստորեն, Սասունի առաջին ճակատամասը, սահմանապահ բերդն է եղել[11]: Շենիկ գյուղացի էին 1894թ. ապստամբության ժամանակ հերոսաբար պայքարող Մոսեի Գրգոն և նույնքան հերոս Սասունի անձնազոհ դուստրը՝ Շաքեն, պապիս հարազատ մորաքույրը, որին նա չէր տեսել, սակայն նրա մասին լսել էր իր քաջազուն մորից՝ խմբապետուհի Ողբեից (Հռիփսիմե): Պապս ականատես է եղել 1904թ. Սասունի ինքնապաշտպանությանը, տեսել է, թե ինչպես իր երկու գեղեցկուհի մորաքույրները՝ Ալթունն ու Հզիկը (Հազարավարդ) իրենց հերոսուհի քրոջ օրինակով, որը փոքրիկ

մանկիկը գրկին նետվել էր ժայռից թուրք ասկյարների ձեռքը չընկնելու և չանարգվելու համար, իրենց գցում են Շենիկով հոսող վարար գետ՝ ազատվելով թուրք և քուրդ խուժանից և խեղդվում են[12]: 19-րդ դարի սկզբին Շենիկ գյուղն ուներ 70-80 տուն, 700-800 շունչ բնակիչ, իսկ պապիս պատմածով 100-ից 120 տուն՝ 1000 շնչով: Շենիկը հայտնի էր ծխախոտագործությամբ, Սասունի՝ «Սամսոն ծխախոտով»: Շենիկի հողամասերը կոչվում էին ըստ վայրերի՝ Տապեի արտեր, Քընֆանա արտեր, Վերի ճամ, Վարի ճամ, Գյուլու արտեր, Բաբըջանցից արտեր, Ախոյի արտ, Շեղտանցիք, Գուռջոկնին, Խրժկըկնին, Բաժեք (անջուր), Ալըջեք, Սարու արտեր, Գազգազկնին, Ձուլըկնին և այլն[13]: Շենիկն ուներ արևելքից-արևմուտք ձգվող երկու փողոց և մեկն էլ հյուսիսից-հարավ, որով գյուղը բաժանվում էր չորս թաղի: Գյուղամիջի աղբյուրը կոչվում էր Գեղաղբյուր, իսկ արևելքում՝ դեպի Սեմալ գյուղը, Շենիկից մեկ կմ հեռու՝ Քընֆանա աղբյուրը: Շենիկի սրբավայրերն ու պատմական տեղավայրերն էին՝ Սբ. Աստվածածին եկեղեցին՝ գյուղի հյուսիս-արևմտյան կողմում, մոտ մեկ կմ հեռու, Սուրբ Գևորգը, որը մի մատուռ էր Սբ. Աստվածածին եկեղեցուց երկու հարյուր մետրի չափ դեպի հյուսիս - արևելք, որին հավատում էին նաև քրդերը՝ ուխտի գալով նրա մոտ: Գյուղից արևմուտք՝ Շեղտանցի և Գուռջոկնին կոչվող հողամասում՝ փոքրիկ մի բարձրության վրա կար մի հին, ավերակ եկեղեցի, որի շուրջը՝ բլրի վրա, խաչքարերի մի մասը մինչև 1915 թ. դեռ կանգուն էր, բլրի արևելյան մասում հին գերեզմանատունն էր: Այդ եկեղեցին կոչվում էր Կարմրակ, որը, հավանաբար, վանք է եղել, որտեղ ալոճի շատ ծառեր կային[14]:

Շենիկ գյուղն ուներ երեք գերեզմանոցներ՝ Կարմրակի, Սուրբ Գևորգի և Աստվածածնի՝ ըստ եկեղեցիների անունների: Շենիկի հարավ-արևմուտքում էր Սուրբ Թեոդորոսի ավերակ վանքը, ուր կային խաչքարեր և շինությունների մնացորդներ: Թեոդորոս վանքից դեպի Մերգեմոզան և Կուրտըկ (Սիմ) սարի Սև- Քարը՝ մոտ 8-10 կմ-ի վրա ջրանցքի հետքեր կային մինչև 1915 թվականը: Ժողովուրդն այդ ջրանցքի կառուցումը կապում էր մի իշխանի աղջկա հետ և ջրանցքը կոչում «Քառասուն մանկանց առու»: Ըստ ավանդության՝ 40 մանուկներն իրարից գաղտնի սիրում էին իշխանի գեղեցիկ աղջկան, և առուն կոչվել է «Քառասուն մանկանց»: Կալա Սըլունկը (Կալա Սըլընգ) գտնվում է բարձր անտառապատ բլուրի վրա՝ Ալիանքից և Շենիկից հոսող երկու համանուն գետերի միացման տեղում: Բերդը Սլկունյաց նախարարության ամրոցն է եղել, որ հետագայում Տարոնի Տեր Մամիկոնյանները գրավել և միացրել են իրենց կալվածքներին:

Գուրձոկնին այն ֆոր պոստն է, որից միշտ կատարվել են քրդական և թուրքական հարձակումները. շենիկցիները խրամատներ էին կառուցում և ամրացնում այդ կողմը[15]:

Դքրանե-զիվկըրան (ոսկերիչների խանութներ) Շենիկ գյուղից հյուսիս՝ Կուրտըկ (Սիմ) լեռնաշղթայի վրա, մի կիլոմետր տարածությամբ կան փոսեր, բլուրներ, որոնք ունեն երկաթահալվածքի մնացորդներ, հանքաքարեր: Ըստ ավանդության՝ դրանք դարբնոցներ և ոսկերիչների խանութներ են եղել, որովհետև այդտեղ քաղաք է եղել, մոտը՝ Ծիծեռնակա վանքը:

Դուքնովիտն անտառապատ մի ձոր էր, որի երկարությամբ եղել են խանութներ (դուքան), դրա համար կոչվել է դուքնովիտ (դուքանի հովիտ)[16]:

Շենիկ գյուղի մոտերքում՝ Անդոք լեռան դիմաց կանգնած մտորում էի պապիս՝ Սիմոն Հակոբյանի պատմածների մասին: Վերհիշում էի Սասնա սարերում ու ձորերում կատարված ողբերգությունները: Չէ՞ որ Անդոք լեռան ինքնապաշտպանության կռիվների ընթացքում էր, որ նահատակվեցին Սասունի դյուցազուն զավակներն ու նրանց թվում՝ շենիկցի իր հարազատները՝ Ղազարն ու Պողոսի Առաքելը, իր մայրը՝ խմբապետուհի Ոըբեն ու եղբոր կինը՝ Զրեն, որը նաև Ղարսի կռվի մասնակիցն էր ու հերոս սուրհանդակուհին: Բոլորն էլ զոհ դարձան թուրքական հրետանու արկի ահեղ պայթու-

նին: Այդ հուշը պապիս սրտում միշտ մորմոքում էր ու տանջում խռովահույզ հոգին: Եվ մենք՝ նրանց ժառանգները, ոտք դնելով մեր հայրենիքի սուրբ հողին՝ որոնեցինք ու գտանք մեր ցեղի թողած աստվածային հետքերը, ճանաչեցինք, համբուրեցինք ու երկրպագեցինք նրանց: Գեղատեսիլ ու անզուգական էր էրգրի բնաշխարհը՝ իր երկնապաց լեռներով ու անտառներով,ջրառատ գետերով, լճերով ու սառնորակ աղբյուրներով:

Պապս՝ Սիմոն Հարությունի Հակոբյանը, ծնվել էր 1896 թվականին Սասուն Շատախի /նախկինում Տափկի շրջան/ Շենիկ գյուղում, Հակոբ ու Պողոս եղբայրների մեծ գերդաստանի ազդեցիկ ու բարեկեցիկ բազմանդամ ընտանիքում, որը տոգորված էր պատվախնդրությամբ և խոր հայրենասիրությամբ: Անցել էին երկար տարիներ, սակայն բազմանդամ ընտանիքի անդամները պապենական ավանդության համաձայն միշտ եղել են անբաժան ու ապրել հաշտ ու խաղաղ: Ընտանիքի անդամների ընդհանուր թվաքանակն անցնում էր 50-ից: Ու ինչպես պապս էր նշում, ընտանիքում եղել է նույնիսկ 40 մանկան օրորոց[17]:

Պապս, ում մանկության ու պատանեկության տարիներն անցել են հարազատ Շենիկում,դեռ մանուկուց տեսել էր հայերի նկատմամբ թուրքերի ու քրդերի անմարդկային վերաբերմունքը. ջարդերը, կողոպուտներն ու թալանը : Նա, որ իր ծնողներից էր միայն լսել Սասունի 1894թ-ի համիդյան ջարդերի ու ավերումների մասին, շուտով՝ 1904 թ-ին, ինքն է դառնում ականատեսն ու վկան Սասունի երկրորդ կոտորումի ու ավերածությունների, որ Սասուն գավառից խլեց 30 հազարից ավել կյանքեր: Նա վերապրեց Մեծ եղեռնի արհավիրքները, մի խումբ սասունցիների հետ, կռվելով թուրք և քուրդ ոստիկի դեմ, Անդրանիկի ջոկատի կազմում եկավ Արևելյան Հայաստան:Սկզբում՝Սարդարապատ, իսկ ապա Չոլոյի ղեկավարությամբ սասունցիների ջոկատի կազմում մասնակցեց Ներքին Թալինի բերդի գրավմանը[18]: Նրանք պատսպարվեցին Թալինի շրջանի Ոսկեթաս գյուղում: Դրանից առաջ նա մասնակցել է Սարդարապատի ճակատամարտին: Ոսկեթաս գյուղում ստեղծել է բազմանդամ ընտանիք՝ 10 երեխա, որոնցից 2-ը մահացել են փոքր հասակում: Նրա որդիներից Գեղամ Հարությունյանը զոհվել է Հայրենական պատերազմի տարիներին՝ 1944թ.-ին, Լեհաստանի ազատագրման ժամանակ: Պապս զբաղվում էր անասնապահությամբ և հողագործությամբ, իր ազնիվ աշխատանքով հոգում ընտանիքի կարիքները: Մահացել է 1987թ-ին՝էրգրի ցավն ու կարոտը սրտում[19]: Մինչև իր կյանքի վերջն ապրում էր իր բնօրրան՝ Սասնա Շենիկ վերադառնալու բաղձալի հույսով:

Մեր խմբի անդամներին պատմելով պապիս հիշողություններից՝ 1915-1916 թթ. եղեռնագործությունից, մտաբերեցի, թե ինչպես է նա հրաշքով փրկվել: Ուստի մեջ եմ բերում նրա պատմածի մի փոքր հատված, որից պարզ երևում է հայոց ցեղասպանության մեջ թուրքերից բացի, քրդերի ոճրագործություններն ու թալանը, հարևան հայերի հաշվին հարստանալու մոլուցքն ու դաժանորեն հային սպանելու պատրաստակամությունը:Թուրք և քուրդ այդ ջարդարարների կողքին եղել են Սիմադի նման բարի կամեցող,իրենց հարևան հայերին պատշպանող քրդեր, որոնց քանակը դժբախտաբար քիչ է եղել:

1915թ. թուրքական հրամանատարությունն իրագործելով հայության բնաջնջման իր ծրագիրը՝թուրքական զորքերն անընդհատ համալրում էր տարբեր տարածաշրջաններից Սասունի վրա եկող քրդական հրոսակներով ու բաշիբոզուկներով, զինում էր նրանց և ուղարկում Սասունի անզեն բնակչության վրա:

1915թ. հունիսին ամենուրեք, սար ու ձոր լեփ-լեցուն էին նրանցով, թալանչի խուժան՝ զորքի հետևից ընկած կրնկակոխ գալիս էր, որպեսզի մասնակից դառնա սպանդին ու ունեցվածքի թալանին: Այդ իրավիճակում որոշվեց գյուղի ողջ ազգաբնակչությունը տեղահանել ու անվնաս հասցնել մոտակա Անդոք լեռը: Ժողովուրդը, թողած իր տունն ու ապրուստը թշնամուն, խուճապահար փորձում էր իր կյանքն ազատել մոտե-

ցող մահվան ճիրաններից: Լեռան պաշտպանությունը հոգալու համար տղամարդիկ անմիջապես սկսեցին դիրքեր փորել ու որքան հնարավոր էր արագ նախապատրաստել ժողովրդի ինքնապաշտպանությունը: «Լեռան ստորոտին առաջին դիրքը փորեց հորեղբորս տղան՝ Պողոսի Առաքելը՝ իր տասնյակներով,-պատմում էր պապս, ապա՝ ավելացնում, – եղբայրս, տեսնելով, որ ես անզեն եմ ու միաժամանակ դեռ անփորձ՝ ինձ ուղարկեց ավելի վեր՝ անվտանգ մի վայր, որտեղ ես հնարավորություն կունենայի ինքս ինձ պաշտպանելու: Ու այդպես կարճ ժամանակ ես ականատես դարձա Շենիկի առաջին տասնյակի դիրքավորման աշխատանքներին ու հարազատներից ընդմիշտ բաժանվեցի: Չնայած այն բանին, որ ես ցանկանում էի մորիցս չբաժանվել ու մնալ նրա կողքին, սակայն մայրս, շոյելով գլուխս ու գուրգուրելով ինձ, նույնպես խորհուրդ տվեց, իրենից բաժանվել ու բարձրանալ ավելի ապահով ու անվտանգ տեղ. ասես ծնողական սիրտը զգում էր մոտեցող ողբերգությունը»[20]:

Ժողովրդի հիմնական զանգվածը շարունակում էր կանանց, ծերերին ու երեխաներին օժանդակել ու որքան հնարավոր է նրանց համար ապահով ապաստան ստեղծել Անդոք լեռան գագաթին: Դրությունը ծանր էր ու անհուսալի, լալիս էին մանկահասակ երեխաները, ծեր մարդիկ դարձել էին ուժասպառ: Շուտով սկսվեց հրետանակոծությունը անպաշտպան ու անօգնական ժողովրդի հոծ զանգվածների վրա: Թվում էր, թե ամենուրեք մահը մեզ է հետևում, չորս բոլորը պայթում էին հրետանու արձակած ռումբերը: Մենք մեր հույսը կապում էինք ռուսական բանակի մոտենալու և մեզ շուտափույթ օգնելու հետ և դեռ դիմադրում էինք: Եվ երբ խավարն իջնում էր լեռան գագաթին ու լռում էին հրացանաձգության ձայները, բնավեր ժողովուրդը մոլորվել էր, չգիտեր ինչ աներ... Մի կողմից՝ սպառվել էր պարենը, մյուս կողմից՝ զինամթերքի պակասը մեզ թևաթափ էր անում:Ռուսական բանակի օգնության հույսերը չիրականացան, հակառակը՝ մենք շուտով լուր ստացանք, որ ռուսական բանակը պատրաստվում է նահանջի: Իրարանցում ու վայնասուն ընկավ ժողովրդի մեջ: Սգում էին բոլորը, քանի որ այլևս ազատվելու ոչ մի հույս չկար: Մի քանի օր՝ գիշերով, մեր՝ Սասունի գյուղերի տղամարդիկ ստիպված գնում էին գյուղերը, որպեսզի պատուհանների վրայից երկաթյա ձողերը, կտրատեին և օգտագործեին որպես գնդակ՝ փամփուշտները լցնելու և պաշտպանվելու համար:

Հուլիսի երկրորդ տասնօրյակի վերջին օրերն էին, կար ինչպես սննդամթերքի, այնպես էլ՝ զինամթերքի խիստ պակաս: Հուլիսի 20-ի լույս 21-ի գիշերը կոտորված ժողովրդի վերջին բեկորները թողեցին Անդոք լեռան ինքնապաշտպանական գիծն ու որոշեցին փրկության այլ ճանապարհ գտնել: Ռազմաճակատում կռվող թուրքական զորաբանակն իր ողջ ուժերը կենտրոնացրել էր Սասունի վրա, որոնց էին միացել միաժամանակ քրդական աշիրեթները, քոռ Սլոյի (խիանքցի աշիրապետն և խիանքի շրջանի գավառապետը, որն արշավում էր Ծովասարի կողմից, իսկ Խուլբից սրանց էր օգնության շտապում Հասան աղան, Արևմուտքից՝ Հյուսեին աղան և Շենի բանակի զորապետերն իրենց խմբերով,որոնց զորքի ընդհանուր թվաքանակը հազարից ավելի էր[21]: Հուլիսի 15-ին թուրքերը երեք նոր թնդանոթ բերեցին Մուշից և ուղղեցին Անդոկի դիրքերի վրա: Անզեն ժողովուրդը խուճապահար աճապարում էր ամեն գնով ազատվել մոտեցող մահվան ճիրաններից, թշնամու ձեռքը չընկնել: Սակայն թշնամին մեզ ամեն կողմից շրջափակման մեջ էր առել ու անխնա կոտորում էր: Մենք շարունակում էինք մագլցել լեռան գագաթը: Հասել էինք Կեբինի լեռնագագաթին, որն անչափ անանցանելի էր ու խիստ դժվար: Այնտեղից պետք է անցնեինք Կռըշիկի անտառը: Մեզնից շատերը չէին կարողանում մագլցել, պոկվում էին ժայռերի ծերպերից ու գահավիժում էին՝ ահասարսուռ ճիչեր արձակելով: Իմ առջևից գնում էր մի երիտասարդ, որը Մուշ քաղաքից էր: Նա հազիվ 15-16 տարեկան կլիներ: Հանկարծ նա սայթաքեց ժայռի ծերպից՝ օդում պտույտ տալով, կորցնելով իր հավասարակշռությունը, գլխիվայր զարնվեց ժայռի սրածայր պռնկին ու գահավիժեց անդունդ: Անդոք լեռը այդ օրերին գրեթե

90%-ով կորցրեց Սասունի իր սիրելի ժողովրդին: Անդոկ լեռան ստորոտում՝ Հարմոյի գոմեր բնակավայրում՝ Կռըշիկի անտառի դիմաց թուրքերը բերեցին բազմաթիվ հայ ընտանիքների՝ լցրեցին մատույցները և այրեցին: Այս սարսափելի կոտորածից փրկվեցին հատուկենտ մարդիկ, որոնցից մեկն էլ ես էի: Թողնելով Անդոք ու Կեբին լեռները՝ հուլիսի 20-ի լույս 21-ի գիշերը մենք՝ ողջ մնացածներս, շարժվեցինք դեպի Քանասարի Կալառաշի անտառը՝այստեղից ճանապարհների ամեն քայլափոխին ականատես էինք լինում կոտորված ժողովրդի ողբերգական ու դժոխային տեսարաններին, հայերը խոշտանգված ու մորթոտված էին հրեշավոր ձևերով: Քանասարում ականատես եղանք մի տեսարանի: Թուրքերն ու քրդերը զինված էին սրերով ու զենքերով, կիսավեր քանդված խրճիթից դուրս քաշեցին մի հայ կնոջ, որի գրկում կար 3-4 ամսական երեխա: Կինը ահասարսուռ աղերսանքներով խնդրում էր իրեն չսպանել, սակայն զուր էին կնոջ աղիողորմ կանչերը: Նրանք քաշքշում էին անօգնական զոհին, որը, ինչպես անպաշտպան եղնիկն արնածարավ գայլերի ու բորենիների մեջ, նվաղեց, և նրա ձայնը մենք այլևս չլսեցինք: Հետո, երբ նրանք հեռացել էին, մենք մոտեցանք այդ չարաբաստիկ խրճիթին, այնտեղ կնոջ դիակը տեսանք սրախողխող վիճակում: Նրա աչքերը բաց էին, իսկ երեխան մոր կրծքին գգված կուրծք էր որոնում…[22]

Հաջորդ օրը Քանասարում ես հանդիպեցի հորեղբորս՝ Խանե Սարգսին: Սարգիսը զինված էր Մոսին հրացանով, նրա կրակոտ ու ըմբոստ հայացքը ոգևորեց մեզ, նոր լիցքեր հաղորդեց:

Գիշերով մենք դուրս եկանք մի բաց տարածություն: Այստեղ հանդիպեցինք ահավոր տեսարանի. թուրքերն ու քրդերը կոտորել էին մեծ բազմության, դիակներն անկանոն կիտված էին: Քանի որ գիշերը լուսնյակ էր, մենք փորձեցինք դիակների մեջ որոնել ու գտնել մեր հարազատներին կամ ծանոթ անձանց: Դիակների մեջ շատ էին ծանոթները: Ես ճանաչեցի Գբրոյի Արշոյի դիակը: Դա այն երիտասարդն էր, որ Անդոք լեռան ինքնապաշտպանական կռիվների օրերին հերոսաբար կռվել էր թուրք ու քուրդ ջարդարարների դեմ: Նա շենիկցիների առաջին տասնյակում էր: Առաջին գծում էին կռվում նաև իմ հորեղբոր տղա Պողոսի Առաքելը, նրա հետ միաժամանակ քաջաբար կռվում էին եղբորս կինը՝ Զրեն, ու մայրս՝ Ոըբեն, բոլորն էլ զոհ դարձան հուլիս ամսի վերջին թուրքական հրետանու ռումբի ահեղ պայթյունին: Միայն հրաշքով ողջ էին մնացել հորեղբորս տղա Խանե Սարգիսն ու Գբրոյի Արշոն, որոնք ականատես եղան Պողոսի Առաքելի հերոսական վախճանին: Այդ դեպքից ընդամենը մի քանի օր անց նահատակվեց Գբրոյի Արշոն: Քանասարում մենք տեսանք, թե քրդերն ինչպիսի դաժանությամբ էին սպանել Արշոյին: Նրա մարմինն ընկել էր մեջքի վրա, և որովայնը բաց էր, ու ձեռքերը՝ կողմ տարածված: Այդ դիակների մեջ, սակայն, եղբորս չգտա: Քիչ հեռու մարդիկ կային, բարեբախտաբար ողջ էին մնացել և քնած էին: Երբ Սարգիսը մոտեցավ նրանց՝ անմիջապես ճանաչեց եղբորս, ինձ կանչելով՝ ցույց տվեց նրան: Ես այնքան ուրախացա եղբորս ողջ տեսնելով, որ թվաց, թե ամեն ինչ կորած չէ: Քնած տեղը նետվելով եղբորս վրա, գրկելով՝ խելագարի պես համբուրում էի. թվում էր, թե տարիներով կորցրել էի նրան: Եղբայրս արթնանալով ու տեսնելով ինձ՝ շատ ուրախացավ: Գրկախառնվելով Քանասարի փեշին՝ անուշ քնով քնեցինք մինչև լուսաբաց: Լուսադեմին, երբ լուսաստղը դեռ փայլում էր, շատերս գրեթե արթուն էինք: Մահվան դժնդակ տեսարանները մեր աչքերի դիմաց ու մյուս կողմից՝ սովածությունը այլևս հնարավորություն չէին տալիս կրկին քուն մտնելու:

-Ի՞նչ անեինք: Չնայած նրան, որ խաղաղ օրերին մենք մթերք էինք հավաքել և պահել նեղ օրվա համար, սակայն, այդ օրը լուսացավ ու մենք չկարողացանք դրանից օգտվել: Մարդիկ կային, որ յուղով շաղախված թանհատ (լոռ) և շաղախ ունեին և այդ օրը մի կերպ ապրեցին: Երբ իջավ իրիկնամուտը, եղբայրս մի քանի տղերքի հետ գնաց գյուղ և մեր տան պահած սերը, որ կարասով հորում էինք առուների ջրերի տակ, որպեսզի արջերը չհանեին, բերելով՝ մի քանի օր ապրեցինք: Չնայած տանը նաև հացահատիկ ու-

ներինք պահված, սակայն այն հանելու ժամանակը դեռ չէր եկել, քանի որ մենք անընդատ գտնվում էինք շարժման մեջ: Այդպես անցավ ևս մի քանի օր: Մենք որոշեցինք գնալ Դալլքը քրդական գյուղը, որտեղ ապրում էին ծանոթ քրդեր, որոնց հետ խաղաղ օրերին մտերիմ էինք եղել ու նրանց շատ լավություն էինք արել: Դալլքը գյուղն ամբողջությամբ քրդական էր և ուներ 20-25 տուն բնակիչ[23]: Գյուղը գտնվում էր Շենիկից 5-6 կիլոմետր հեռու՝ դեպի հյուսիս: Դալլքը գյուղից քիչ ցած, հարավ-արևմտյան կողմում կային ևս մի քանի տուն քրդեր, որոնց կոչում էին դավրեշի տներ՝ ընդամենը 4 տուն: Այդ քրդերին ծանոթ չէինք, սակայն Դալլքի քրդերին լավ էինք ճանաչում: Եղբայրս մեզ տարավ իրեն ծանոթ քրդի՝ Ահմադի տունը: Ահմադը շատ ազնիվ ու բարի մարդ էր. նա մեզ ընդունեց շատ սիրալիր ու հարգալից վարվելաձևով, ապա ոչխար մորթեց և մեզ հյուրասիրեց: Այդպես անցավ մի քանի օր, մենք չէինք կարող նրա տանը երկար մնալ, քանզի թուրքական կառավարությունը հրաման էր արձակել, որով արգելվում էր հայ մարդկանց պահել կամ թաքցնել: Այդ բանի համար նախատեսված էր մահապատիժ և գույքի բռնագրավում: Եղբայրս որոշեց գնալ մոտակա անտառը, թաքնվել, գյուղ մտնել միայն գիշերով ու խիստ զգույշ: Մենք թաքնված էինք Քփրե Հսե վայրում, որտեղ Ահմադը հաճախ էր մեզ այցելության գալիս, և մենք կարողանում էինք կապ պահպանել գյուղի հետ: Կար նաև մեկ այլ կարևոր հանգամանք, որը մենք նույպես նկատի էինք առել: Դա այն էր, որ մեր խումբը զինված էր, և չէինք ցանկանում քրդերին երևալ նման ձևով: Ամեն անգամ, երբ գյուղ էինք մտնում, զենքերը թողնում էինք անտառում: Մոտակայքում կար նույպես քրդաբնակ մի գյուղ, որին կոչում էին Լաչկան: Հաճախ էր պատահում, որ այդ գյուղի բնակիչները երևում էին մոտ տարածքներում: Նրանց տեսնելիս աշխատում էինք դատարկ ու անզեն երևալ: Սակայն քրդերը գաղտագողի հետևում էին մեզ: Մի օր էլ անտառում նստած էինք, երբ տեսանք ծանոթ մի քրդի, որը լաչկանցի էր, Գբրոյի տների փեսան էր: Նա նկատելով զենքերը, որոնք դրված էին քիչ հեռու՝ թփերի տակ, ոչինչ չասաց ու հեռացավ՝ աչքը չկտրելով զենքերից: Մի քանի օր անց մեր զենքերը թաքստոցից անհետացան: Մենք կորցրեցինք ազատվելու հույսը, որ հիմնականում կապել էինք զենքերի հետ: Դրանք բավական թանկ էին. գնվել էին ոսկով: Յուրաքանչյուր զենքն արժեր 8 տասանոց ոսկի, որն այդ ժամանակ 8 եզան արժեք ուներ[24]: Անցան ևս մի քանի օր: Մենք հասկացանք, որ ծանոթ քուրդն այդ կողմերում այլևս չի երևում, խույս է տալիս մեզնից: Այդ բանը նկատի ունենալով՝ գնացինք նրա տուն. մեզ դիմավորեց ուրախ տրամադրությամբ: Նրա շարժուձևերից պարզ զգացվում էր շփոթվածություն և կաշկանդվածություն, որ զենքերը նա էր գողացել, սակայն չկարողացանք որևէ խոսք ասել: Մի քանի օր անց մեր զենքերից մեկը տեսանք այդ քրդի եղբոր ձեռքին: Հասկանալով քրդերի անհավատարմությունը մեր հանդեպ՝ եղբայրս որոշեց այդ վայրից հեռանալ: Մենք Քփրե Հսե վայրից հեռացանք ու տեղափոխվեցինք քիչ դեպի հարավ-արևմուտք: Տեղանքին քաջ ծանոթ էինք, որն ամեն կողմից շրջափակված էր անտառներով ու ձորերով, որտեղ վտանգի դեպքում կարող էինք նպաստավոր տեղ գտնել ու պաշտպանվել: Այստեղ էին գտնվում Դավրեշի տները՝ Դալլքը գյուղից ընդամենը 300-400 մետր հեռավորության վրա: Դավրեշի տները շրջափակված էին ձորերով՝ Դալլքի և Մուշ քաղաքի կողմից: Դավրեշի տներից դեպի հյուսիս՝ մոտ 40-50 քայլ հեռավորության վրա էր գտնվում «Տլեյ գվիժ» կոչվող սարալանջը, որը թարգմանած հայերեն նշանակում է ալոճի վայր, որտեղ կային ալոճի (վայրի սալորի) ծառեր և մի փոքր աղբյուր: Այս աղբյուրի մոտ հաճախ էինք գալիս մեր ծարավը հագեցնելու: Մի օր էլ մի քուրդ հովիվ այդ աղբյուրի մոտ տեսնելով մեզ՝ կտրուկ կանգ առավ ու սարսափելով մեզանից ուզեց փախչել, սակայն եղբայրս համոզեց նրան, որ մենք նրանց տների ծանոթներն ենք ու իրենց բարեկամը: Քուրդ հովիվը, սակայն, կասկածանքով հեռացավ: Ես, որ նրան ուշի-ուշով հետևում էի, հասկացա, որ այդ քուրդը մի խաղ է խաղալու մեր գլխին: Դրա համար էլ եղբորս առաջարկեցի հեռանալ այդտեղից որքան հնարավոր է արագ: Սակայն եղբայրս կասկածամտություն ցույց չտվեց, որ չվախենամ: Խաչոն՝ եղբայրս ու հորեղբորս տղա Հակոբը ճաշում էին

հարիսա ու սոխմա և ծիծաղում էին վրաս, որ ես վախից է, որ չեմ ուզում հաց ուտել[25]: Մեզանից քիչ հեռու պարզ լսվում էր քրդերի ծածուկ խոսակցությունը: Ինձ թվում էր, որ նրանք մեզ վրա հարձակվելու իրենց դավադիր ծրագրերն էին մտմտում: Քրդերի շշուկն աստիճանաբար մոտենում էր մեզ ու դառնում պարզ խոսակցություն: Ես տեսնելով, որ եղբայրս իմ նախազգուշացումները հաշվի չի առնում, ստիպված հեռացա նրանից, որպեսզի վտանգի դեպքում կարողանայի խուսափել: Սակայն, ավա՛ղ ուշ էր…Քրդերը հասցրել էին փակել մեր նահանջի բոլոր ճանապարհները և այնքան էին մոտեցել մեզ, որ նույնիսկ ձեռքով բռնեցին ինձ: Եղբայրս ու հորեղբորս տղան արագ կողմնորոշվեցին և մտան անտառ: Քրդերն ինձ տարան դեպի անտառի բացատ: Նրանց նպատակն էր, որ եղբորս ու հորեղբորս տղային նույպես ձեռք գցեն: Նրանք եղբորիցս պահանջեցին, որ անտառից դուրս գա, իսկ հակառակ պարագայում՝ ինձ կսպանեին: Եղբայրս այդ խոսքերը լսելով՝ անզեն ու հանուն ինձ եկավ ու կանգնեց նրանց դիմաց: Քրդերը, տեսնելով եղբորս, մի պահ սարսուռ զգացին ու ակնապիշ եղբորս նայեցին: Նա բարձրահասակ էր, ջլապինդ ու թիկնեղ, ուներ թավ բեղեր: Հագուստը, որը դեռ նոր էր գնել Մուշ քաղաքից, թանկարժեք էր, նրան խիստ համապատասխան, իսկ հայացքը տպավորիչ էր և սարսռազդու: Քրդերից մի քանիսը մոտենալով եղբորս՝ կամեցան սկզբում տիրանալ նրա հագուստին, քանի դեռ չէր արնոտվել: Նրանցից մեկը փորձեց արձակել նրա մեջքի գոտին, որտեղ եղբայրս թաքուն պահում էր իր դանակը: Եղբայրս փորձեց նախևառաջ ինձ ազատել նրանց ձեռքից, հետո միայն՝ կռվի բռնվել: Բռնելով քրդի զույգ ձեռքերը՝ թույլ չտվեց, որ նա հնարավորություն ունենա քանդել իր հագուստը և գոտին ու տեսնել նաև թաքցրած դանակը: Եվ այդ պահին նա իր խոժոռ ու հրամայական հայացքով նշան արեց, ես ազատվելու փորձ անեմ: Ես փորձեցի, սակայն, ավա՛ղ, չկարողացա քրդի ձեռքից պոկվել: Նա հաղթանդամ էր և ուժեղ, իսկ ես՝ դեռահաս, անփորձ մի պատանի: Քուրդը, սուրը ծոծրակիս մոտ բռնելով, ասաց, որ եթե նորից փորձեմ ազատվել, ապա՝ «գյավուր օղլի՜», այս սրով գլուխդ կկտրեմ[26]: Ստիպված եղա հնազանդվել: Մյուս քուրդը, որ դեռ իր ձեռքերն էր փորձում ազատել եղբորս ձեռքերից, սակայն չէր կարողանում, քանի որ եղբայրս բռնել էր շատ ամուր: Այդ վարկյաններն անցնում էին արագ ու ճակատագրական կարող էին լինել մեզ համար: Այդ հանգամանքը նկատի առնելով՝ եղբայրս կրկին ինձ հասկացնել տվեց, որ նորից փորձեմ ազատվել քրդի կապանքից, սակայն այս անգամ չհամարձակվեցի: Նա հասկացավ և ստիպված պաշտպանությունից անցավ հարձակման: Քրդին գետնով տալով՝ անմիջապես դանակը գոտկատեղից դուրս քաշեց և փորձեց սպանել նրան: Քուրդը ձայնեց կանգնած քրդերին, որ իրեն օգնության գան: Այդ պահին մեկ այլ քուրդ կախ ընկավ եղբորս բազկից, գետնին ընկած քուրդը հասցրեց զույգ ձեռքով բռնել դանակը և թույլ չտալ, որ եղբայրս հարվածեր իրեն: Եղբայրս զայրալից ինձ նայեց ու հասկացրեց, որ փախչեմ: Այս անգամ ինձ հաջողվեց ազատվել քրդի ձեռքից: Նա, որ ինձ բռնել էր, զարմանքից քարացել ու թուլացել էր: Ասես, եղբորս կռվի այդ տեսարանը դիտելիս, նրա ձեռքերը դողում էին և մտքով եղբորս կողմն էր: Եղբորս վրա հարձակված քրդերը տեսնելով, որ ես ազատվեցի, հայհոյելով իրենց ընկերոջը՝ ասում էին, թե կաքավը մենք բռնեցինք, ուր թողեցիր ծագին: Այդ քուրդը վազեց իմ կողմը, փորձեց կրկին բռնել ինձ, սակայն չկարողացավ: Եղբայրս քրդերին հայհոյեց ու ոգևորված ասաց, թե «Արջ էիք մտցրել անտառը, տեսեք՝ ձեր վիճակը ինչ կլինի …»[27]: Նա տեղյակ չէր, որ դեպքի վայր էին շտապում ևս երկու քուրդ, որոնցից մեկը մեզ պահող քրդի մորեղբայրն էր, անունը՝ Ալի, իսկ մյուսն ինձ անծանոթ էր: Ես շտապ նետվեցի նրա գիրկը, որ վերջինս թույլ չտար անծանոթ երկու քրդերին ինձ սպանել: Հենց այդ պահին Ալին փորձեց գլխիս հարվածել ու հայհոյեց՝ ասելով՝ գյավուր: Ինձ հետապնդող հովիվ քուրդը հարվածեց թիկունքից, սակայն չկարողացավ վնասել, միայն հագուստս պատառոտեց: Ես կարողացա երկու հարվածից էլ խուսափել: Հովիվ քուրդը շարունակելով հետապնդել ինձ՝ սրանց պատվիրեց արագ հասնել այն վայրը, որտեղ եղբորս հետ մարտնչում էին մյուս քրդերը: Քրդերը, որոնք չորսով կռվում էին եղբորս

դեմ, զինված էին: Այն քրդերը, որոնք պատահաբար էին հայտնվել փախուստի իմ ճանապարհին, աճապարեցին դեպքի վայրը: Փախչելով հովիվ քրդի հետապնդումից՝ ես մտա մի անանցանելի ձոր: Նա ինձ զցելով ծուղակ՝ դեմ արեց մի ժայռի, որը կախված էր ձորի վրա: Այլևս հնարավոր չէր փախչել, գերադասեցի նետվել ժայռից ու նետվեցի….: Սակայն վերջս չէր եկել, ու ես, բարեբախտաբար, այս անգամ էլ ազատվեցի. ոչ մի տեղս չվնասվեց: Քուրդը մոտեցել էր ժայռի պռնկին, բայց նա փորձ չարեց իջնել կամ հետապնդել ինձ: Ես ձորի միջով սլանում էի՝ ինչպես թռչունը օդում: Քրդերը, ամեն կողմից փակուղու մեջ առնելով ձորը՝ ձայն էին տալիս մեկը մյուսին և իմ շարժման ուղղությունը հաղորդում իրար: Ձորում ես հանդիպեցի ծանոթ մի հայի, որն իր հագուստներն էր լվանում ձորի ջրում: Նրա անունն էր Վրթ: Նա իմ ասածներից շփոթվեց ու բռնելով ինձ՝ այնպես սեղմեց իր կրծքին, որ լեզուն անմիջապես կապ ընկավ: Նրա աչքերի բիբերը լայնացել էին, իսկ մկանները այնպես էին ջղաձգվել, որ այլևս անհնար էր ազատվել նրա ձեռքերից. «Տեր Աստվա՜ծ, հիմի սա ինչ փորձանք է»,- մտածում էի ու կրկին փորձում ազատվել նրանից, սակայն նա այնքան ուժգնորեն էր ինձ խաչվել, և ակնապիշ հայացքն այնպես էր սառել, որ նրա սարսափը, ասես, փոխանցվել էր ինձ, ու ես ստիպված եղա նրան հայհոյել և ասել. «Հա՜, ինչու ես ինձ բռնել, թո՜ղ ինձ, թե չէ հիմա քրդերն ինձ կբռնեն[28]: Իմ խոսքերը նրա վրա ազդեցություն չունեցան: Վախը, սարսափը նրան այնպես էին կարկամել, որ նա չկարողացավ ինձ բաց թողնել ու ես, սուզվելով ներքև՝ նրա ոտքերի արանքով մի կերպ դուրս պրծա: Ու փախչում եմ դեպի Դալլբ գյուղը, որ փրկություն գտնեմ ծանոթ քուրդ Ահմադի տանը: Նոր էի մոտեցել նրանց դռանը, երբ դռան շեմին ինձ հանդիպեց Ահմադի մայրը, որին խնդրեցի, ինձ թաքցնել իրենց տանը: Քրդուհին խորհուրդ տվեց, որ փախչեմ և ավելի հարմար տեղ գտնեմ: Նա ասաց, որ տանը տղամարդ չկա, որ ինձ պաշտպանի: Կգան, կսպանեն ինձ, և նա ոչինչ չի կարողանա անել, փորձեց արդարանալ և այդ խոսքերը ասաց լացակումած ու ափսոսանքով[29]: Կտրվեց վերջին հույսս, և ես շարունակեցի փախչել: Ձորամիջում, մի պահ կորցնելով հետապնդող հովիվ քրդին, նկատեցի մի ջրափոս, որն առաջացել էր ջրվեժից, որը լիքն էր ջրով՝ շուրջը մացառուտներ, որտեղից ջուրը հոսում էր և կասկած չէր առաջացնում: Ես նետվեցի այդ ջրափոսը և թիկունքս հպելով փոսի գոգավոր պատերին՝ մնացի թաքնված: Բարեբախտաբար ջրափոսի շուրջ բոլորն աճել էր առատ խոտ և մացառ, որոնք կախված էին ջրափոսի վրա և հասել էին ջրին: Թաքնվելով ջրափոսում ու խոտերով ծածկելով գլուխս՝ երկար ժամանակ, անշարժ մնացի: Ձուրը, որի մեջ սուզված էի, շատ սառն էր, սակայն ինչ կարող էի անել մահվան սարսափն ավելի մեծ էր, ու փրկության ուրիշ ելք չկար այդ պահին: Քրդերը մոտեցել էին ինձ և մեկը մյուսին էր հարցնում, թե ուր անհետացավ հայը: Հեռվից լսվում էր նաև ուրիշ քրդերի բազմաթիվ ձայներ, որոնք տեղեկություններ էին հաղորդում, որ հայը ձորում է, դուրս չի եկել, հարկավոր է ուշադիր զննել: Ջրափոսի պռնկին կանգնած քուրդը, լսելով հեռվից ձայնող քրդերի խորհուրդները, սկսեց զննել ջրափոսը, որտեղ ես էի թաքնված, ու ոտքը կիսով չափ դնելով իմ գլխին, չկարողացավ նկատել ինձ և սուրը մտցնելով ջրափոսի մեջ ու ջրի վրա ծածանվող խոտերը տանելով այս ու այն կողմ՝ համոզվեց, որ ես այստեղ չեմ, ու հեռացավ:

Քրդերի խլրտոցը ձորում, կարծես, կտրվել էր ու օրը մթնել, սակայն ես դեռ ջրափոսում էի, չէի համարձակվում դուրս գալ: Ձորի ջրի սառնությունից մարմինս գրեթե անզգայացել էր: Գլուխս դնելով թաց հողաթմբին՝ պարանոցիս մկանները սառեցրել էի, այլևս ես չէի կարողանում շարժել: Արևն արդեն մայր էր մտել, ու անցել էր բավականին ժամանակ, ձորը լցվել էր թանձր խավարով: Չկար այլևս ո՛չ ձայն, ո՛չ շշուկ, միայն ջրի գլգլոցն էր միապաղաղ ու անվերջ ձայնում խավարին՝ ասես հսկելով բնության լուռ անդորրը: Խավարն ինձ, ասես, հույս էր ներշնչում, ու ես որոշեցի դուրս գալ և փրկության նոր ճանապարհներ որոնել: Բայց, երբ փորձեցի, զգացի, որ մարմինս անզգայացած է ու կռկված: Տեր Աստվա՜ծ, ինչ կարող եմ անել ես այս վիճակով, երբ ոտքերս չեն աշ-

խատում ու մարմինս անզգայացած վիճակում է: Հույսս դնելով ձեռքերիս վրա, մի կերպ կառչելով ջրափոսի շուրթերի մացառներին, ձգվեցի դեպի հողաթումբը, որն ավազախառն էր և գոյացել էր ջրի տեղաշարժից: Բավականին տաք էր, ու արևի կիզիչ ճառագայթներից ստացած ջերմությունը դեռ պահպանվում էր: Ավազահողն այս ու այն կողմ տալով՝ մի փոս պատրաստեցի և մարմինս քարշ տվեցի այդ փոսի մեջ: Ավազահողը լցնելով մարմնիս վրա՝ որոշ ժամանակ այդ վիճակում մնացի: Այնուհետև մարմնումս զգալով որոշակի փոփոխություն, ծակծկոց, շատ ուրախացա, որ կենդանության զգացողությունը նորից վերականգնված է: Հոգիս, ասես, չէր ուզում ձեռք քաշել իմ տանջահար մարմնից: Փորձեցի շարժել ոտքերս, որ դեռ բավականին թույլ էին ու թմրած: Այդ պահին նկատեցի ինձ մոտեցող մի մարդու, որը նկատվում էր հորիզոնի երկնակամարում: Ուրվագծվում էր նրա քրդական գդակը: Նա մոտենում էր ինձ գաղթագողի ու քիչ կռացած: Հեյ վախ,- սրտնեղված հոգոցով հառաչեցի՝ մտքումս մտածելով, որ ուր որ է կարող է նկատել ինձ[30]: Ոտքերս չէին աշխատում, որ փախչեի, կյանքս համարեցի ավարտված: Սակայն ինձ մոտեցող քուրդը կամաց իմ անունն էր տալիս ու ծածուկ ինձ փնտրում: Նրա ձայնից ճանաչեցի, որ մեզ պահող հավատարիմ քուրդն էր՝ Ահմադը: Ես ձայն տվեցի նրան, ու նա մոտեցավ ինձ, շատ ուրախացավ, որ ինձ գտավ ողջ և առողջ: Մենք ճամփա ընկանք նրանց գյուղ: Խավար էր ու լուռ, ճանապարհին ես, եղբորս մասին էի մտածում, նրան շարունակ հարցնում էի, թե ինչ տեղեկություն ունի եղբորից. ազատվել է արդյո՞ք, թե՝ ոչ: Ահմադը, սակայն, ինձ հանդարտեցնում էր, ասելով, որ չմտածեմ, քանզի եղբայրս ազատվել է: Ես կասկածանքով ու անհամբերությամբ շտապում էի, թե երբ պիտի հասնենք նրա տունը, որ տեսնեի եղբորս: Երբ հասանք, տան դուռը բացեց, և մեզ ընդառաջ ելավ Ահմեդի մայրը՝ ճրագը ձեռքին: Ինձ տեսնելով՝ ուրախացավ ու շոյեց գլուխս, ողջագուրեց և մրմնջալով լաց եղավ: Իմ մեջ կասկածներ առաջացան, ու ես նրան հարցրի, թե որտեղ է եղբայրս, որ չեկավ ինձ դիմավորելու: Ծեր քրդուհին իմ այս խոսքերից ավելի ազդվեց և հոնգուր-հոնգուր լաց եղավ: «Նրանք տեղ են գնացել, հետո կգան»,- մի կերպ պատասխանեց քրդուհին: «Նստի՜ր, նստի՜ր, հաց բերեմ, կեր, մինչև նրանք գան»[31]: Իմ մեջ կասկածանքն ավելի սաստկացավ, ու ես համոզվեցի, որ քրդերը եղբորս սպանել են: Ինձ թվաց, թե եղբայրս իրենց տանն է: Երբ քրդուհին ճրագը ձեռքին ուզում էր մտնել մառան ու հաց բերեր, ճրագի աղոտ լույսի տակ նշմարեցի սպիտակ շորեր, որ կիտված էին դռան հետևում: Կասկածն իմ մեջ հասավ գագաթնակետին, փորձում էի հասկանալ, թե ինչու են այդ շորերը լցված դռան մոտ և չլինի՞ թե դրանք…

Այո՜, կասկածանքներս ճիշտ էին ու իրողություն, որ սևազգեստ հոգեառի նման ինձ էին հետապնդում՝ շանթելով ուղեղս: Ես արագ քայլերով մոտեցա դռանը, որտեղ կիտված էր քրդական ավարը՝ ուրիշներից գողացված ու թալանված, շաղախված արյունով: Իմ եղբոր ու հորեղբոր տղայի հագուստներն էին, որ մարդակեր քուրդ բորենիները բերել ու նվիրել էին իրենց հարազատ քրդին: Արյունոտ շորերը, ասես, թե ինձ ձգում էին, որ վերցնեմ ու տեսնեմ այն արյունը, որ ժամեր առաջ իմ եղբոր ու հորեղբոր տղայի մարմնում էին: Նրանց արյունոտ հագուստները սեղմելով դեմքիս՝ լաց էի լինում ու մղկտում, խելագարի պես չէի ուզում բաժանվել: Այլևս չկար իմ միակ հույսը՝ իմ սիրելի եղբայրը:

Եղբորս նահատակվելուց անցել էր շուրջ երկու ամիս: Սակայն ես չկարողացա դուրս գալ Ահմադի տանից, կամ փրկության այլ ճանապարհներ գտնել, քանի որ ամենուրեք վխտում էին թուրք ու քուրդ մարդակեր բորենիներ, որոնք արյան ծարավի՝ սար ու ձոր ընկնելով, որոնում ու սպանում էին անզեն և անպաշտպան հայերին: Թալանում էին նրանց ունեցվածքն ու անգամ հագուստը և այնքան ոխերիմ էին, որ չէին խնայում նույնիսկ հայի դռան շեմին նստած շանը: Օսմանյան կառավարությունը հրաման էր արձակել, որ ամենուրեք փակցված էր պատերին. այն անձնավորությունները, ովքեր փորձ անեին պահել կամ թաքցնել հայ գյավուրներին, նրանց համար նախա-

տեսվում էր մահապատիժ և գույքի բռնագրավում, իսկ նշանավոր հայ մարդկանց հայ-տանքերման ու պետությանը հանձնելու համար մեծ գումարներ ու առանձնաշնորհումներ էին տրվում: Ամեն քայլափոխի մեր կյանքը վտանգված էր:

Այդպես օրերն անցան ու մի օր էլ ես վեր կացա ու գնացի այն վայրը, որտեղ սպանվել էր եղբայրս: Երբ մոտեցա աղբյուրին, որի մոտ հաց էինք ուտում ու հանգստանում, տեսա ջրի մեջ ընկած եղբորս մերկ մարմինը: Քրդերը նրա հագուստը կողոպտելուց հետո եղբորս ոտքը պարանոցովն էին գցել ու ջուրն էին նետել, որ նշան էր այն բանի, որ նա շատ համառ էր եղել ու սպանել էր նրանցից մի քանիսին: Այդ իրողության մանրամասները նրանք պատմել էին իմ ծանոթ քրդին: Եղբորս մարմինը ջրում պահպանվել էր շուրջ երկու ամիս, սակայն հորեղբորս տղայի՝ Հակոբի մարմնից, որին քրդերը սպանել էին նրանից քիչ հեռու, մնացել էին միայն ոսկորները, որոնք ես ու հորեղբորս տղան՝ Սողոմոնը, հավաքեցինք ու եղբորս մարմնի հետ թաղեցինք մի գերեզմանափոսում: Եղբորս գլխին ու ճակատային մասում տեսանք կացնի բազմաթիվ հետքեր, իսկ կրծքավանդակի վրա երևում էր հրազենի մի անցք, որը նշան էր այն բանի, որ սկզբում նրան խփել էին հրազենով, իսկ այնուհետև իրենց ատելությունն իրականացրել էին կացնի միջոցով: Անցել են այն օրերից շատ երկար տարիներ, ու եղբորս գերեզմանը դարձավ ինձ համար ամենադառը հուշ, որի ցավն այրում ու տանջում է հոգիս շարունակ: Նա մնաց ինձանից հեռու, շա՛տ հեռու, և ես դարձա տարագիր ու մոլոր…[32]

«Սասնա լեռների դաժան իրականության մեջ ապրելով ու մի կերպ գոյատևելով՝ միայն 1916թ. ռուսական զորքի կողմից Մուշի ազատագրումից հետո մի խումբ սասունցիների և տարագիր հայերի հետ ես գաղթեցի Արևելյան Հայաստան»,- պատմում էր պապս[33]:

Արմենի միջոցով հաղորդակցվեցինք տեղի քրդերի հետ: Շատերը գիտեին, թե ովքեր են եղել այն տան տերերը, որտեղ հիմա իրենք ապրում են: Նրանք նշում էին, որ Մոսե Գրքոյի թոռները Լիբանանից իրենց այցելության են գալիս պապի տունը տեսնելու: Չորի պռնկին արդեն հասցրել էի ջուր վերցնել, ապա՝ ծնկել հնամյա ծառերի կողքին, որ շատ բան տեսած ալեհեր ծերունների նման հետևում էին, թե ինչպես եմ հիմա իմ ձեռքերով փորփրում հողը, խնամքով վերցնում՝ ներկայիս Հայաստանի Հանրապետության Թալինի Շենիկ գյուղ բերելու ու նրա հողին ու ջրին խառնելու համար: Գյուղը, որտեղ 1971թ. վերաբանկեցվել էին Սասնա շենիկցիների ժառանգները, ապրում էր մայրս ու մյուս հարազատներս: Գյուղի հիմնադիրներն են եղել շենիկցի Մանուկ Մելքոնյանը (տնօրեն) ու հայրս՝ Գարեգին Միհասյանը (փոխտնօրեն): Գյուղի ներկայիս գյուղապետը եղբայրս է՝ Կորյուն Միհասյանը: Կորուստը պիտի գիտակցել: Պապիցս, ծնողներից լսածները համադրվել էին պատմաբանի իմ գիտելիքների հետ: Խոսում էի Սասունի ֆիդայական շարժման, եղերական իրադարձությունների մասին, զուգահեռներ էի անցկացնում Սասունի Շենիկի և Բաղրամյանի շրջանի Շենիկ գյուղերի աշխարհագրական դիրքերի միջև: Կորուստը պիտի գիտակցել՝ նոր կորուստներին դիմակայելու համար, կորուստը վերցրած՝ հող ու ջրի նման պիտի խառնել հիշողությանը՝ որպես իմունիտետ: Մեքենան իջնում էր Սասնա սարերից, տղաները Սասնա երգեր էին երգում Սասնա սարերում: Մեքենայի արագության տակ նրանց ձայները հարազատ կանչերի նման միաձուլվում էին արագ փոփոխվող Սասնա տեսարանների հետ: Մեր երգերի մեջ սասունցիների կորուստի մրմուռն էր խառնված և մի ուրիշ կերպ էր հնչում իմ պապի բնօրրանում: Ես պապիս պատմածին նմանեցրած մի քանի տուն պահեցի հիշողությանս մեջ՝ «Ելի լաո, ելի երթանք մըր էրգիր» երգելիս կամ լսելիս մտովի այնտեղ վերադառնալու համար: Այն, ինչ ունենք, պիտի պահենք արժանի ձևով, որ հետո Սասնա մրմուռ չդառնա…

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տե՛ս Սասունի Կ. , Պատմութիւն Տարօնի աշխարհի, Պէյրութ, 1957, էջ 891:
2. Մինասյան Է. , Հայ հերոսուհի կանայք, Երևան, 2016, էջ 199, 200:
3. Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում,վերապրածների վկայություններ, փաստաթղթերի ժողովածու, Բիթլիսի նահանգ, հատոր 2-րդ, Երևան, 2012, էջ 255:
4. Հայոց պատմություն, հ. 3, գիրք երկրորդ, Երևան, 2015, էջ 502, 503:
5. Պետոյան Վ. , Սասուն, Երևան, 2016, էջ 23:
6. Տե՛ս նույն տեղում:
7. Նույն տեղում:
8. Նույն տեղում, էջ 24:
9. Նույն տեղում, էջ 29:
10. Նույն տեղում, էջ 28, 29:
11. Նույն տեղում, էջ 29, 30:
12. Տե՛ս Մինասյան Է. նշվ. աշխ. , էջ 223, 224:
13. Պետոյան Վ. , նշվ. աշխ. , էջ 22, 23, 30:
14. Նույն տեղում, էջ 30:
15. Նույն տեղում, էջ 31:
16. Նույն տեղում:
17. Սիմոն Հակոբյանի անձնական արխիվի նյութերից (Հուշերը գրի է առել որդին՝ Վարդան Հարությունյանը)
18. Նույն տեղում
19. Նույն տեղում:
20. Նույն տեղում:
21. ՀՀԱ (Հայաստանի ազգային արխիվ), Ֆ. 227,g. 1,գ. 454,թ. 42,43
22. Նույն տեղում:
23. Նույն տեղում:
24. Նույն տեղում:
25. Նույն տեղում:
26. Նույն տեղում:
27. Նույն տեղում:
28. Նույն տեղում:
29. Նույն տեղում:
30. Նույն տեղում:
31. Նույ տեղում:
32. Նույն տեղում:
33. Նույն տեղում:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Արևմտյան Հայաստանի Բիթլիսի նահանգի Սասուն գավառի Շենիկ գյուղի 1915-1916թթ. կոտորածները՝ ըստ ցեղասպանությունը վերապրած Սիմոն Հակոբյանի հուշերի

Էդիկ Մինասյան

Հոդվածում հեղինակը իր պապի՝ Սիմոն Հակոբյանի հուշերի և պատմական անհրաժեշտ գրականության վերլուծության հիման վրա, ցույց է տվել թուրքական կանո-

նավոր բանակի և քրդական աշիրապետերի ու թալանչիական ուժերի համագործակցությամբ Սասուն գավառում և նրա գյուղերում, հատկապես՝ Շենիկում իրականացրած մասսայական ջարդերը: Հեղինակը, այցելելով իր պապի ծննդավայրը, վերհիշելով նրա պատմածները, նկարագրում է հարևան քրդերի բուն նպատակը. հայերին կոտորելով՝ տիրել նրանց ունեցվածքին, թուրքական խոստումներին հավատարիմ՝ յուրացնել դրանք: Հոդվածում մարդասպան ու ոճրագործ թուրքերի և քրդերի կողքին ցույց է տրված Ահմադի նման բարի ու հայերին օգնող քրդի կերպարը, որոնք չնայած քիչ էին, բայց կային հարևան քրդերի շրջանում: Նրանց օգնության շնորհիվ՝ մի քանի տասնյակ ու հարյուրավոր հայ ընտանիքների անդամներ փրկվեցին ցեղասպանությունից: Սիմոն Հակոբյանի հուշերի հիման վրա Շենիկի օրինակով բացահայտվում է ամբողջ Արևմտյան Հայաստանում թուրքական կառավարության որդեգրած՝ պանթուրքիզմի քաղաքականության իրագործման մանրամասները, քրդերին և մուսուլմանական այլ ժողովուրդներին օգտագործելով՝ հայությանը բնաջնջելու և նրա հայրենիքին ու ունեցվածքին տիրանալու ցանկությունը: Հոդվածում առանձին դրվագներով ցույց է տրված Անդոկ լեռան վրա 30 հազարից ավելի հայության կազմակերպած հերոսական դիմադրությունը թշնամու անհավասար ուժերի դեմ, և մինչև վերջ կռվելու պատրաստակամությունը և թուրքերի ու քրդերի կողմից հայության անխնա ու դաժան կոտորածի մանրամասները:

РЕЗЮМЕ

Резня 1915-1916 годов в селе Шеник (Сасунский район Битлисской области Западной Армении) по воспоминаниям пережившего геноцид Симона Акопяна

Эдик Минасян

Ключевые слова: регулярная турецкая армия, курдские аширaты, Сасун, Муш, Гора Андок, Гора Куртик (Сим), село Шеник, Ахмад, Битлис, Схерд, героическая самооборона, геноцид.

В статье автор, на основе анализа воспоминаний своего деда Симона Акопяна и необходимой исторической литературы, пишет о массовых убийствах, совершенных в Сасунском районе и его селах, особенно в Шенике, турецкой регулярной армией и курдскими отрядами грабителей. Автор, посетив место рождения своего деда, вспоминая сказанное им, описывает главную цель проживающих по соседству курдов: завладеть имуществом армян, истребив их, сделать все, что они обещали турецким властям. В статье представлен образ доброго курда, такого как Ахмад, который помогал армянам. Такие персонажи, хоть их и было немного, были среди курдов, рядом с кровожадными и преступными турками и курдами. Благодаря их помощи десятки и сотни членов армянских семей пережили геноцид. Основанный на мемуарах Симона Акопяна, пример Шеника раскрывает детали политики пантюркизма турецкого правительства на всей территории Западной Армении. То есть с помощью курдов и других мусульманских народов истребить армян, захватить их родину и имущество. В статье отдельными эпизодами показаны героическое сопротивление, организованное более чем 30 тысячами армян на горе Андок против неравных сил врага, готовность сражаться до конца, подробности беспощадной и зверской резни армян турками и курдами.

SUMMARY

The Massacres in 1915-1916 in the Village of Shenik (Sasun District of Bitlis Province in Western Armenia), According to the Memories of Genocide Survivor Simon Hakobyan

Edik Minasyan

Keywords: regular Turkish army, Kurdish ashirats, Sasun, Mush, Andok Mountain, Kurtik Mountain (Sim), Shenik village, Ahmad, Bitlis, Shherd, heroic self-defense, genocide.

In the article, the author, based on the analysis of his grandfather Simon Hakobyan's memoirs and necessary historical literature, has shown the massacres committed in Sasun district and its villages, especially in Shenik, by Turkish regular army and Kurdish robbers. The author, having visited his grandfather's birthplace, recalling what he has said, describes the main goal of the neighboring Kurds: to take possession of the property of Armenians by massacring them, to do all, they have promised Turkish authorities. The article shows the image of a kind Kurd like Ahmad, who has helped Armenians. Such characters, although few, have been among the Kurds, next to the murderous and criminal Turks and Kurds. Thanks to their support, tens and hundreds of Armenian families survived the genocide. Based on Simon Hakobyan's memoirs, Shenik's example reveals the details of the Turkish government's policy of pan-Turkism throughout Western Armenia. That is, using Kurds and other Muslim nations, to exterminate the Armenians and seize their motherland and property. The article shows in separate episodes the heroic resistance organized by more than 30 thousand Armenians on Mount Andok against the unequal forces of the enemy, the readiness to fight to the end, the details of the ruthless and brutal massacre of the Armenians by the Turks and Kurds.